ԳԻՏԱԺՈՂՈՎ.
«ՄԵԾ ԵՂԵՌՆ. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ»

Ապրիլի 18–19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Մեծ եղեռն. իրողություն և դատապարտում» խորագրով գիտաժողով նվիրված Հայոց ցեղասպանության 90-ամյակին: Ներկա էր ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանը:

Լիագումար նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը: Դատապարտելով մարդկության պատմության մեջ իր նախադեպը չունեցող XX դ. առաջին ցեղասպանությունը, նա նշեց, որ այն իրագործվեց օսմանյան սուլթանական իշխանությունների, երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության և դրա ղեկավարներ Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի, այսպես կոչված, «տիումվիրատի» կողմից: Ներկաները մեկ րոպե լռությամբ հոտնկայս հարգեցին 1,5 մլն անմեղ զոհերի հիշատակը:

Գիտաժողովին հայրապետական իր ուղերձն էր հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը: Մենք վերապրել ենք ամենաահավորն ու սարսափելին, որ կարող է պատահել ժողովրդի կյանքում, նշված էր Վեհափառի ուղերձում: Այն դժնդակ օրերին եղեռնահար մեր ժողովուրդը վերահաստատեց իր ազգային պետականությունը և տարագիր սփռված տարբեր երկրներում վերստին ծխեց ծուխը ծխանի: Այսօր փոխվել են ժամանակները, և 90 տարի առաջ կատարված ոճրին տրվող գնահատականը կարևոր նշանակություն պիտի ունենա, որպեսզի մարդկությունը քայլի ազգերի խաղաղ հարաբերակցության և գործակցության ճանապարհով:

Գիտաժողովի մասնակիցներին ուղերձ էր հղել նաև Ազգային ժողովի նախագահ Ա. Բաղդասարյանը: Ուղերձում մասնավորապես ասված էր, որ աշխարհի շատ խորհրդարաններ արդեն դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, Թուրքիան ևս պետք է ընդունի այդ փաստը, և դա չպետք է խոչընդոտ լինի հայ-թուրքական հարաբերությունների զարգացման համար, քանի որ այն երկիրը, որ ձգտում է եվրաինտեգրման, չպետք է դիմի երկակի ստանդարտների:

Գիտաժողովում ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ, Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի նախագահ Ա. Մարգարյանը: Նա մասնավորապես ասաց, որ 1915 թ. գագաթնակետն էր այն քաղաքականության, որ Օսմանյան կայսրությունը, երիտթուրքերը կատարում էին XIX դ. վերջից մինչև XX դ. 20-ական թվականների սկիզբը: Մեծ եղեռնի իրագործման մեջ մեղավոր էին ոչ միայն թուրքական իշխանությունները, այլ նաև միջազգային այն մթնոլորտը, այն վերաբերմունքը, որի պայմաններում այդ ժամանակվա տարբեր երկրների քաղաքական վերնախավերը կարողացան աչակ-

ցել կամ թույլ տալ, որ կատարվեր ցեղասպանությունը: Եթե ժամանակին կանխարգելվեր Հայոց ցեղասպանությունը, ապա Հոլոքոստը չէր լինի. չէին լինի XX դ. վերջերի ցեղասպանությունները: Ինչպես գիտեք, շարունակեց Ա. Մարգարյանը, ապրիլի 21-ին տեղի է ունենալու «Մանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր. ցեղասպանությունն ու մարդու իրավունքները» միջազգային համաժողովը, որին մասնակցելու են աշխարհի տարբեր երկրների գիտնականներ, քաղաքական գործիչներ, այդ թվում նաև Թուրքիայից: Սա կրկին մեկ քայլ է ցույց տալու ոչ միայն մեր ցանկությունը, այլ նաև կամքը, որ հետամուտ ենք լինելու ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը՝ աչքի առաջ ունենալով մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և ցեղասպանության կանխարգելմանն ուղղված միջոցները:

Գիտաժողովի լիագումար նիստում զեկուցումներով հանդես եկան Ա. Մելքոնյանը («Հայ դատի և Հայոց ցեղասպանության հետապնդման ռազմավարությունը անկախ պետականության պայմաններում»), Գ. Պողոսյանը («Թուրքիայի հասարակական կարծիքը Հայոց ցեղասպանությունից 90 տարի անց»), Ստ. Ստեփանյանը («Գերմանական և նորահայտ փաստաթղթերը հայերի ցեղասպանության մասին»), Վլ. Հովհաննիսյանը («Սևրի պայմանագիրը և Հայոց ցեղասպանության միջազգային իրավական ճանաչումը») և Ա. Եղիազարյանը («Եղեռնի թեմայի արտացոլումը հայ գրականության մեջ»):

Այնուհետև գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին բաժանմունքների նիստերում (Նախագահողներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Վ. Բարխուդարյան, Մ. Զուլալյան, պրոֆեսորներ Ա. Մելքոնյան, Բ. Հարությունյան): Երկու օրում գիտաժողովի մասնակիցներին ներկայացվեցին շուրջ 40 ուշագրավ զեկուցումներ և հաղորդումներ: Դրանց շուրջ ծավալվեցին աշխույժ քննարկումներ: Ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը չի կարող լինել մեր ժողովրդի և պետության վերջնական նպատակը, անհրաժեշտ է հասնել ցեղասպանության հետևանքների վերացմանը, ահա տրված ամփոփ գնահատականը:

Գիտաժողովն իր աշխատանքներն ամփոփեց «Կլոր սեղանով՝ «Հայոց ցեղասպանության միջազգային-իրավական դատապարտման խնդիրը» թեմայով (Նախագահող՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ն. Հովհաննիսյան): Ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին պրոֆեսոր Ա. Մանասյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու. Ալեքսանյանը, ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Վլ. Հովհաննիսյանը, պատմաբաններ Ստ. Ստեփանյանը, Ռ. Սաֆրաստյանը, Ա. Հովհաննիսյանը: